

«ԷՖ.Պի.Ա.»-ի տնօրեն Զորիսթֆըր Ռեյ Միացեալ Նահանգներու Զուկոտսիս մէջ խումբներու ընթացքիս նշեց, թէ իր ընթացակարծ մարմինը կը հետեւի շարժումներուս պայս զինեալ խմբաւորումներու, որոնք Միացեալ Նահանգներու իրիսկա-արեւմտեւորը գտնուող Փորթլենսիս եւ Մեծ լիճեր շրջանի մօտ գտնուող Քինոշալի մէջ ցեղապաշտութեան դէմ ցոյցերու ընթացքիս բախում ունեցած են: «Այլեւ բնութեան իրաւորըս նախ յաւելեալ վառեալիսիկ ունին: Ունին խմբաւորումներ, որոնք իրարու հակադրուտեալներու ունին, ինչ որ կացութեան վտանգաւորութիւնը կ'աճեն: Անկախ նկատուցել շարք մը բաղադրներու մէջ, եւ ասիկա զիս կը մտահոգէ», ըսաւ «ԷՖ.Պի.Ա.»-ի տնօրենը: Աջակցութեան ծալրալեզակալ խմբաւորումներու անդամներ եւ «Ֆաշակալարեան ընդդիմաբասեն»-ու գործիչներ ներթափանցեալ եւ ոստիկանութեան բարեկարգում եւ Միացեալ Նահանգներու մէջ ցեղապաշտութեան վերջ տալ պահանջող ցոցցարարներու մէջ եւ այդ պատճառով զոհեր արձանագրուած են:

Շար.ը՝ էջ 4

Շար.ը՝ էջ 2


Կ'ԸՍԷ ԱՆԳԱՐԱ

Շար.ը՝ էջ 2

Շար.ը՝ էջ 4

4'ԸՄԷ ՀՔՄՈՅ

Շար.ը՝ էջ 4



Ֆիշեցեսեց, որ ագրայեճանամեւ եւ թրքամեւ խոպկանեւր յոլիսի յարճակաճ էիս Սան Ֆրանսիսկոյի Գոռոգեան-Չաքարեան-Վասսպուրական Ագգայիկ վարժարանի եւ սնոր կից գտնուող Հայ կեդրոնի վրայ՝ առեյակաճ հայիոյանեւր գրեւոլ եւ Ագրայեճանի դոճակիս յոյները ներկեւոլ անոնց արտադիս պատերոլոս վրայ։

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՁԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՄԱՔՐՈՆԻ ՀԵՏ ՀՆՈԱԶԱՅՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Հանրապետության նախագահության տեղեկատուական գրասենյակը հաղորդեց, որ երեկ նախագահ Աուն ունեցավ շարք մը հանդիպումներ, որոնց ընթացքին քննարկուեցան դատական, դիվանագիտական եւ քաղաքական հարցեր:

ԱՌՆ-ՆԱԺԸՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Նախագահ Աուն ընդունեց Արդարադատության նախարարի պաշտոնակատար Մարի Զլոտ Նաժմը: Հանդիպումին ընթացքին քննարկուեցան ծանրաբեռնուած բանտերու հարցը լուծելու համար շարք մը բանտարկեալներու յատուկ ներուժ շնորհելու նիւթը, ինչպէս այդ ուղղութեամբ առնուելիք քայլերը:

ՍԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱՔԻՑ ԴԵՍԱՆ

Դիւանագիտական գետնի վրայ, նախագահ Աուն ընդունեց Լիբանանի մէջ Սուտանի դեսպան Ալի Սաւիթի Ալին, որ կ'աւարտէ իր դիւանագիտական առաքելութիւնը Լիբանանի մէջ: Նախագահը շնորհակալութիւն յայտնեց դեսպանին՝ տարբեր մարզերու մէջ երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւններու ամրապնդման եւ զարգացման ուղղութեամբ թափած ճիգերուն համար:

ԵՐԵՍՓՈՒՍԱՆ ԱՍԱՍՏ ՏԵՐԱՄ

Քաղաքական գետնի վրայ, նախագահ Աուն ընդունեց երեսփոխան Ասաստ Տըրդամը, որուն հետ քննարկեց երկրին ընդհանուր կացութիւնը եւ իրավիճակը Աքքարի մէջ՝ յատկապէս ապահովական ու զարգացման տեսանկիւնէն, ինչպէս նաեւ շրջանի կարիքները:

ԱՌՆ-ՄԱՅՐՈՆ ՀԵՈԱԶԱՅՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Հանրապետության նախագահը երեկ նաեւ հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցավ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի հետ, որուն հետ քննարկեց կառավարութեան կազմութեան թղթածրարի վերջին զարգացումները: Երկու նախագահները համաձայնեցան, որ անհրաժեշտ է շարունակել ջանքեր գործադրել տարբեր մակարդակներու վրայ՝ սահմանափակ ժամկետի մէջ ապագայ կառավարութեան ծնունդը ապահովելու համար:

Ֆրանսայի նախագահը յոյս յայտնեց, որ նախագահ Աուն ի գործ դնէ բոլոր ջանքերը՝ հասնելու համար դրական արդիւնքի՝ Նշելով, որ ինք իր կարգին հեռաձայնային հաղորդակցութիւններ պիտի կատարէ:

ՏԻԱՊ ՈՒԵՀՊԷԻՆ ԵՒ ՖԱՀՄԻՆ ՅԱՆՉԱՐԱՐԵՅ ԾՈՎՈՒՆ ՄԷՋ ԿՈՐՍՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՅԻՆԵՐՈՒՆ ՀԱՐՅԸ ՀԵՏԱՊՆԳԵԼ

Վարչապետի պաշտոնակատար Հասսան Տիապ արտաքին գործոց նախարարի պաշտոնակատար Շարպէլ Ուեհպէին յանձնարարեց անհրաժեշտ հաղորդակցութիւնները կատարել Կիպրոսի իշխանութիւններուն հետ՝ հետապնդելու ծովուն մէջ Թրիփոլի քաղաքէն կորսուած լիբանանցիներուն հարցը: Ան միեւնոյն ատեն Ներքին գործոց նախարար Մոհամետ Ֆահմիին յանձնարարեց հարցը հետապնդել ապահովութեան ուժերուն հետ:

Տիապ Շուպ օգնութեան գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար հազարապետ-գորավար Մոհամետ Խէյրէն պահանջեց զոհերու ընտանիքներուն օգնելու կարելիութիւնը ուսումնասիրել:

ՖՈՒԹՊՈԼԻՍՏ ՄՈՀԱՄԵՏ ԱԾՈՒԻ ՄԱՀԱՅԱԻ

Երեկ Լիբանանի ֆուտպոլի ընտանիքը եւ հարաւային Հարուժ քաղաքի բնակիչները մասնակցեցան լիբանանցի ֆուտպոլիստ Մոհամետ Ահմետ Աթուլի թաղման յուղարկւորութեան: Ան երեկ մահացաւ Մաքամ տիւն հիւանդանոցին մէջ՝ 21 օգոստոսին Զոլա շրջանին մէջ վիրաւորուելէ ետք պատահական փամփուռի մը պատճառով:

Չոհին հօրեղբայրը ընտանիքին անունով դատական համաձայնագրէն եւ յատկապէս ապահովութեան ուժերէն ու շահագործիչ կողմերէն պահանջեց լուրջ հետաքննութիւն կատարել այս դժբախտ պատահարին գծով՝ շեշտելով, որ իրենց զաւակը անարդար կերպով սպանուեցաւ, եւ ոճրագործները պէտք է պատժուին, որպէսզի այս ողբերգութիւնը ամեն առիթով չկրկնուի:

Աթուլի մահուան առիթով մարմնակրթութեան եւ երիտասարդութեան նախարարի պաշտոնակատար Վարդիլէ Օհանեան-Գեորգեան կատարեց հետեւեալ գրառումը. «Մեզի ցնցեց ֆուտպոլի աստղ Մոհամետ Աթուլիի մահը իր վերջերուն պատճառով: Մենք կորսնցուցինք համեստ, մեծահոգի եւ բարձրակարգ առատաձեռն մարզիկի տիպար մը: Թող Աստուած հոգին լուսաւորէ եւ անոր ընտանիքին համբերութիւն ու սփոփանք պարգեւէ»:



ՀԵԾԵԼԱՐՇԱԻ

ՎԱԶԷ ԾԱՏՈՒՐԵԱՆ ՎԵՐԸՆՏՐՈՒԵՑԱԻ ՖԵՏԵՐԱՄԻՈՆԻ ՆԱԽԱԳԱՀ



Նոր ֆետերասիոնին կազմը (լուսանկարէն կը բացակայի Ռաֆիք Իտ)

Լիբանանի հեծելարշաւի ֆետերասիոնին Նոր ընտրութիւնները տեղի ունեցան «Աղբալեան-ՀՄԸՄ» մարզամշակութային համալիրին մէջ՝ ներկայութեամբ Լիբանանի երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութեան ներկայացուցիչ ժամանաւ Ռամմալի եւ ընտրութիւններուն մասնակցելու իրաւունք ունեցող տաւը ակումբներէ ութին ներկայացուցիչներուն:

Իր խօսքին մէջ, ֆետերասիոնի նախագահ Վաշէ Ծատուրեան ըսաւ, որ բոլոր ֆետերասիոններուն նման, հեծելարշաւի ֆետերասիոնին համար եւս 2020 տարին եղաւ մարզական իրադարձութիւններէ զուրկ, բնականաբար՝ «Զորոնա» ժահրին պատճառով: Ասկէ մեկնելով՝ Լիբանանի Ողիմպիական կոմիտէի նախագահ ժան Համմամ, հեծելարշաւի բոլոր ակումբներուն այս տարուան ցենզերը ջնջեց:

Ապա տեղի ունեցան Նոր ֆետերասիոնին ընտրութիւնները՝ յառաջիկայ չորս տարիներուն համար:

Մրցակից ցանկի չգոյութեան պատճառով, թէկնածու ներկայացած եօթը անձերն ալ ընտրութեան Նոր ֆետերասիոնի անդամ:

Ապա տեղի ունեցաւ պաշտօններու բաժանում՝ հետեւեալ ձեւով.

ԺԻՊԷՅԼ

ԴԵՄՈՒՆ ԱԾԱԲԷԿԵԱՆ ԱՅՅԵԼԷՅ ԵՈՒՆԵՄՔՈՒ ՄԱՐԴԱՄԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆ

Լիբանանի մէջ Հայաստանի դեսպանատունը կը հաղորդէ, թէ 18 սեպտեմբերին դեսպան Վահագն Աթաբեկեան այցելեց Ժիպէլի մէջ տեղակալած ԵՈՒՆԵՍԿՕ-ի մարդասիրական գիտութիւններու Միջազգային կեդրոն եւ հանդիպում ունեցաւ վերջինիս տնօրէն Տարիսա Սալիպա-Ապի Շըտիտի հետ:

Յերմ եւ բարեկամական զրոյցի մը ընթացքին քննարկուեցան մշակութային, կրթական եւ ֆրանսափոսութեան ոլորտին մէջ հետագայ համագործակցութեան հեռանկարներ:

Չրուցակիցները մանրամասնութիւններ քննարկեցին 21 սեպտեմբէ-



րին հաղաղութեան միջազգային օրուան նուիրուած միացեալ ձեռնարկին վերաբերեալ, որ պիտի եզրափակուի հայաստանեան մշակութային գործիչներու մասնակցութեամբ առցանց համերգային ծրագիրով՝ Հայաստանի Հանրապետության Անկախութեան տօնին առիթով:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

●ՆՈՐՀՐԴԱՐԱՆԻ նախագահ Նեպիի Պըրրի երեկ Այն Թիւնի մէջ ընդունեց կրթութեան հարցերու խորհրդարանական մետալու յանձնախումբի նախագահ, երեսփոխան Պահիա

Հարիրին, որուն հետ քննարկեց երկրին ընդհանուր կացութիւնը եւ կրթական հարցերը:

●ԲԱՆԱԿԻ հրամանատար գոր. Ժոզէֆ Աուն երեկ Եարգէի մէջ ընդունեց Լիբանանի մէջ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի անձնական ներկայացուցիչ Իան Զուպիչը, որուն հետ քննարկեց լիբանանեան եւ շրջանային իրադարձութիւնները:

«ՈՉ ԵՐՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ . . . »

Շարունակուած Ա. Էջէն

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը Նշած է, որ Եւրոպական խորհրդարանը կը կորսնցնէ իր հեղինակութիւնը կողմնակալ ու անարդար դիրքորոշման եւ ծովային օրէքներու անհիմն ու միակողմանի մեկնաբանութիւններու պատճառով:

«Ո՛չ Եւրոպական խորհրդարանը, ո՛չ Եւրոպական Միութիւնը, ո՛չ ալ Եւրոպական Միութեան անդամ երկիրները իրաւասութիւն ունին որոշելու երրորդ երկիրներու սահմաններն ու իրաւասութիւնները», ընդգծած է նախարարութիւնը:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը աւելցուցած է. «Նման կողմնակալ որոշումի որդեգրումը, հակառակ բոլոր մակարդակներուն վրայ

եւ Եւրոպական Միութեան բոլոր կառույցներուն մէջ Թուրքիոյ ջանքերուն, անհամատեղելի է բարի կամեցողութեան եւ ողջախոհութեան հետ»:

Նշենք, որ Եւրոպական խորհրդարանը դատապարտած է Յունաստանի եւ Կիպրոսի բացառիկ տնտեսական գոտիին մէջ Թուրքիոյ գործողութիւնները եւ սպառնացած պատժամիջոցներ կիրարկել Անգարայի դէմ:

Եւրոպական խորհրդարանը Եւրոպական խորհուրդին կոչ ուղղած է պատրաստ ըլլալու մշակելու հետագայ սահմանափակումներ, որոնք պէտք է ըլլան ոլորտային ու նպատակային եւ պէտք չէ բացասաբար անդրադառնան Թուրքիոյ ժողովուրդին կամ այնտեղ ապրող զաղթականներուն վրայ:

ԹԵՐԶԵԱՆ. «ՊԷՏՔ Է ՍՏԵՂԾԵԼ ՅՍՏԱԿ ՄԵՔԱՆԻԶՄՆԵՐ ԵՒ ՍԿՍԻԼ ՀԱՏՈՒՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՊԱՅԾՈՒՄԷՆ ՏՈՒԺԱԾՆԵՐՈՒՆ»

Երեսփոխան Յակոբ Թերզեան հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ երկրին քաղաքական դէկադարութիւններուն հարց տուաւ, թէ ո՞ր եւս այսօր նաւահանգիստի ահաւոր պայթուիւն ամիս մը ետք եւ ի՞նչ կ'ընեն այն քաղաքացիներուն համար, որոնք կորսնցուցած են իրենց տունները, սեփականութիւնները: Թերզեան մեղադրեց, որ անոնք կրկին կը դիմեն եւ կ'ապաւիւնին մոռացկոտութեան սկզբունքին՝ կարծելով, որ ատիկա կը լռեցնէ կորուստի ցաւը:



Թերզեան անընդունելի նկատեց, որ աղետէն աւելի քան ամիս մը ետք մարդիկ ձգուած են կորսուած վիճակի մէջ՝ առանց հատուցման յստակ եւ յայտարարուած **մեքանիզմի** մը, եւ առանց զանոնք ուղղորդելու յստակ յայտարարութեան: Ան Նշեց, որ պետութիւնը քաղաքացիները կը ձգէ, որ բախիւն իրենց ճակատագիրին, շահագործուին ճակատագիրին կողմէ եւ դառնան ճգնաժամերու վաճառքի առարկա:

Ան հարց տուաւ, թէ ինչպէ՞ս պատասխանատուները կ'անտեսեն եւ իրենց պարտականութիւնները կը բարդեն բանակի եւ կազմակերպութիւններու ուսերուն վրայ: Ան հարց տուաւ նաեւ, թէ ո՞ր եւս պետական կառույցները եւ արտակարգ դրութիւններու տնօրինութեան մարմինը, որոնց պարտականութիւնն է առաւելագոյն ուշադրութիւնը ցուցաբերել տուժած անհատներու եւ զոհերու ընտանիքներուն, մանաւանդ որ կը գտնուիք ձմեռամուտի սեմին եւ կայ տնտեսական վիճակի ահաւոր վատթարացում:

«Մենք պետութեան եւ պատասխանատուներուն կոչ կ'ուղղենք արագ եւ անյապաղ գործի դնելու յստակ, շօշափելի եւ թափանցիկ **մեքանիզմներ**, եւ սկսելու հատուցում կատարել այս սարսափելի ոճիրէն տուժածներուն: Եւ մենք նաեւ կը պահանջենք արդիւնաւետ միջոցներ ձմրան ցուրտէն խուսափելու եւ տուժածները բնականոն եւ ապահով կենացի վերադարձնելու ուղղութեամբ: Ես պետութեան եւ իւրաքանչիւր պատասխանատուի կոչ կ'ուղղեմ, որ այսօրուան գործը վարդուան չձգեն: Մենք թանկագին կենացք կորսնցուցինք եւ չենք ուզեր ողբերն ալ կորսնցնել», եզրափակեց երեսփոխան Թերզեան:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ՄԵԾԻ...»

Շարունակուած Ա. Էջէն

«Բնականաբար թեմերը կ'ապրին տարբեր պայմաններու մէջ, Ներքին տարբեր դրուածքներ ունին, որոշ չափով տեղական տարբեր մտահոգութիւններ, սակայն նաեւ ունին հասարակաց եւ ընդհանրական բնոյթ ունեցող մարտահրաւերներ ու առաջնահերթութիւններ: Անհրաժեշտ է նկատի ունենալ տեղական պայմաններուն առնչուած տարբերութիւնները եւ շեշտել ընդհանրական ու համահայկական բնոյթ ունեցող խնդիրները, երեւոյթներն ու ծրագիրները», ըսաւ վեհափառ հայրապետը:

Արամ Ա. կաթողիկոս անգամ մը եւս շեշտեց «սփիւռքին կազմակերպչական հզօրութիւն տալու, անոր մարդկային ներուժը համադրելու, համահայկական ծրագիրներու եւ ազգային պահանջատիրութեան գծով կատարուող աշխատանքները ներդաշնակելու եւ Հայաստանի ու Արցախի պետութեանց առաւել հզօրացման նպաստելու իր հաւաքական յանձնառութիւնը ամրացնելու անյետանգելի հրամայականը»: Վեհափառ հայրապետը խորապէս կը հաւատայ, թէ «անհրաժեշտ է զաղութները իրենց ներափոխի ու ինքնակեդրոն վիճակներէն դուրս բերել եւ համախմբել համահայկական շրջագիծին մէջ՝ ի խնդիր համազգային առաջնահերթութիւններու իրագործման: Այս յոյժ կարեւոր աշխատանքը կ'ենթադրէ սփիւռքի վերակազմակերպումը, եւ այս գծով Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, երեք կուսակցութիւններուն եւ քոյր կազմակերպութիւններուն դերին ներդաշնակումը աւելի քան երեք կը մնայ վճռական», ընդգծեց վեհափառ հայրապետը:

«ԱԶԳԱԿ»-Ի ՖՈՆՏԻՆ

● «Փէյվալ» ծրագիրին միջոցով, քաջալերելով «Ազդակ»-ի աշխատանքները՝

- Հելէն Կարապետեան (Միացեալ Նահանգներ) 100\$

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԱՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ 29-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Նախագահութեամբ՝
ՆՍՕՏՏ Արամ Ա. կաթողիկոսին

Տեղի կ'ունենայ կիրակի, 20 սեպտեմբեր 2020-ին, յընթացք Ա. եւ անմահ պատարագին, Անթիլիայի մայրավանքին մէջ:

Պատարագը ուղիղ պիտի պիռուկ կաթողիկոսարանիս «Սիլիսիա Թի. Վի.»-ի դիմատետրի եւ «ԵՈւ. Թիուպ»-ի էջերէն:

ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՆՇԱՐ

ԹՈՒՐԲ-ԱԶԵՐԻԱԿԱՆ ՆՈՅՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաորիիչ եկեղեցւոյ կողքի սրահը հրծիգութեան մը գոհը դարձաւ եւ լուրջ վնասներու ենթարկուեցաւ հինգշաթի, 17 սեպտեմբերի կանուխ առաւօտուն։

Ո՛չ մէկ կասկած, որ ոճրային այս արարքին տակ կայ ստորագրութիւնը թուրքին ու ազերիին։ Այդ ստորագրութիւնը աւելի բացայայտ տառերով արձանագրուած էր շուրջ 2 ամիս առաջ, երբ Ազգային Գոուգեան-Չաքարեան վարժարանի շէնքը նմանապէս գիշերով խափարարութեան թիրախ դարձած էր. անոր պատերուն երեցած էին Ազդպէճեանի դոօշափն գծանկարները, հայերուս ուղղուած վարկաբեկիչ խօսքեր ու հայիոյանքներ։

Թրքօ-ազերի ստորագրութիւնը «մեանշնորհը» չէ Սան Ֆրանսիսքոյի մեր օճախին։ Անկիւն աւելի քան երկու տարի առաջ երեցած էր Լոս Անճելըսի հայկական երկու վարժարաններու՝ Ֆերահեանի ու Մարի Մանուկեան-Տեմիրճեանի շրջափակին մէջ։ Վերջերս, անկիւն հասաւ Փարիզ՝ պղծելով Յեղասպանութեան իրողական գոհերէն՝ Կոմիտաս Վարդապետի յուշարձանը. անկիւն շրջագայութեան ելած է Նաեւ հայկական տարբեր օճախներու մէջ, գտնելով տարբեր արտայայտութիւններ, սակայն ծնունդ առնելով միեւնոյն ոճրային յղացքէ։ Օրինակի համար, անկիւն այլ «տառատեսակով» արձանագրուեցաւ այն ցոյցերուն, որոնք տեղի ունեցան ամերիկեան եւ եւրոպական քաղաքներու մէջ, Տաւուշի վրայ ազերիական յարձակումը դատապարտող հայ երիտասարդներու ցոյցերուն դէմ։ Միեւնոյն ստորագրութիւնը կը կրէին Տաւուշի վրայ յարձակումը, թուրք-ազերիական միացեալ ռազմափորձը, աւելի քան 4 տարի առաջ տեղի ունեցած Ազդիլեան պատերազմը, հայ սպայի մը եւ Յրանդ Տիւքի մը վատարի սպանութիւնները։ Չննք կրնար մոռնալ Լիբանանի հայութեան ուղղուած՝ ցեղասպանութիւնը կրկնելու նորագոյն սպառնալիքները։ Շղթան կ'երկարի մինչեւ Պաքու ու Մուկլայիթ, կը հասնի մինչեւ Յեղասպանութիւն ու Յամիտեան ջարդեր։ Կարմիր շղթային օղակները անհատնում են։ (Անկիւն կ'երեւի Նաեւ հայկական շրջագիծը դուրս՝ Սուրիոյ, Իրաքի եւ այլ երկիրներու մէջ, Թուրքիոյ աջակցութիւն ու հովանիին վայելող՝ «խլամ ծայրայեղականներ»-ու կազմակերպած ջարդերով)։

* * *

Հասած է պահը, երբ ճակատաբաց պէտք է յայտարարել, որ չենք կրնար բաւարարուիլ դատապարտումի, զօրակցական եւ վշտակցութեան խօսքերով։ Այդ բոլորը ողջունելի են, գնահատելի են Նաեւ հետապնդումի եւ հրծիգները քողագերծելու անկեղծ խոստումները։ Այդ մասին ո՛չ մէկ խօսք, սակայն... «խօսքով ապուր չ'էփիր»։

Իրաւունք ունինք ակնկալելու, աւելի՛ն՝ պահանջելու, որ սկսելով Սան Ֆրանսիսքոյի պետական ու ապահովութեան պատասխանատուներէն, անցնելով Զալիֆորնիոյ ու Միացեալ Նահանգներու բարձրագոյն իշխանութիւններէն, ու հասնելով մինչեւ աշխարհի ամենէն ազդու հեղինակութիւնները, ամերիկեան, եւրոպական եւ ասիական ափերու վրայ, անցնին թրքական ու թրքատիպ այս արարքները դատապարտելէ անդին, գործնական քայլերու դիմեն Երտողաններուն, Ալիեւներուն ու անոնց մեղսակից կամակատարներուն դէմ։ Սա միայն հայութեան կամ անոր մէկ հատուածին դէմ ոճիր ու սադրանք չէ, այլ անկիւն ուղղուած է ամբողջ հայութեան, ու անոր ճամբով՝ քաղաքակիրթ մարդկութեան դէմ, ինչպէս որ Արցախի ու Տաւուշի վրայ յարձակումները թիրախ ընտրած էին ամբողջ հայութիւնը, առանց վայրի ու քաղաքական պատասխանիչութեան խտրութեան։ Պէտք ունի՞ւք աշխարհին յիշեցնելու, որ Նոյն ստորագրութեան տէրերէն՝ Էրտողան վերջին շաբաթներուն ասպարեզ կը կարդայ աշխարհին, կ'անտեսէ իր աշխարհակալական ծրագիրները դատապարտողները, ինքնազսպումի կոչ ուղղողները։

Թուրքիոյ ու Ազդպէճեանի փոքրագոյն ոճիրներուն եւ մասնակի թուացող սադրանքներուն վրայ աչք փակելը, անոնց հետ այս կամ այն հաշիւն ու հին-նոր բարեկամութիւնները պաշտպանելը համազօր են անուղղակի մեղսակցութեան, ուղղակի քաջաւերանքի։ Մենք՝ հայերս, սկսելով Հայ դատի սպասարկուներէն մինչեւ կուսակցութիւններ, դիւանագիտական ցանց եւ Հայաստանի ու Արցախի պետութիւններ, տրամադիր չենք կուլ տալու նման լեղի դեղահատեր։ Պէտք է կրկին ու կրկին յիշեցնենք բոլորին, աշխարհի մեծերուն գլուխները մրճահարեմք անընդիստ, պահանջելով, որ թուրք-ազերիական նման ստորագրութիւնները պէտք է վերջ գտնեն, Էրտողաններն ու Ալիեւները, իրենց կամակատարներուն հետ, պէտք է ձերբակալուին, աշխարհը պէտք է ձեւը գտնէ ձերբազատելու նոր-հիթերական ձգտումներ սնուցանողներէ, ի՛նչ ալ որ ըլլան անոնց երկիրներէն սպասուած՝ քարիւղաբոյր կամ ռազմական-ռազմավարական շահերը։

Ս. ՄԱՅՍԵՐԵՃԵԱՆ

17 սեպտեմբեր 2020

ՀԱՂՈՐԴ-ԱԳՐՈՒԹԻՒՆ



Մեր օրերուն, բոլորս ամենուր կ'ապրինք տաժանելի կացութիւններ, յատկապէս թագածաիր համավարակի պարտադրած արգելքները, իսկ Լիբանանի պարագային, 4 օգոստոս 2020-ին Պէյրութի Նաւահանգիստին մէջ ծագած աղէտն ու անոր հետեւանքները։ Այս պայմաններուն մէջ, Համազգայինը չէ դադրեցուցած իր մշակութային եւ կրթական գործունեութիւնը, շնորհիւ մեր Շրջանային վարչութիւններու, Մեկուսի կազմերու, մասնաճիւղերու, գեղարուեստի դպրոցներու եւ Ճեմարաններու անդուլ եւ նուիրական ճիգերուն։

Ուրախութեամբ կը յայտնենք, որ այսօր հանդէս կու գանք Նոր Նախաձեռնութեամբ մը, մէկ կողմէ մեր մշակութային երթը վառ պահելու եւ միւս կողմէ՝ պատուելու հայ մեծանուն գրող, բանաստեղծ եւ կրթական մշակ Մուշեղ Իշխանը, որուն մահուան 30-ամեակն է այս տարի։

Արդ, աշխարհասփիռ հայ հանրութեան կը ներկայացնենք հայկական երգացանկին վրայ մեր յաւելումը, որ իրականացաւ Հայաստանէն, Արցախէն եւ սփիւռքէն հայ արուեստագետներու համախմբումով։ Միասնական այս աշխատանքին արդիւնքը եղաւ Մ. Իշխանի «Հայ հոգին» բանաստեղծութեան երգի վերածումը, յօրինմամբ հայրենի երաժիշտ Արմէնուհի Կարապետեանի եւ կատարմամբ 26 հանրածանօթ երգիչներու եւ երաժիշտներու։ Առանց անոնց սիրայօժար մասնակցութեան, մեր Նախաձեռնութեան իրականացումը անկարելի պիտի ըլլար։

Այսօր երգն ու անոր տեսերիզը պատրաստ են, եւ անոնց անդրանիկ հրապարակումը տեղի պիտի ունենայ Համազգայինի Արեւմտեան Ամերիկայի շրջանին կազմակերպած «Քեզի համար Լիբանան» առցանց երաժշտական յայտագիրէն, շաբաթ 19 սեպտեմբեր 2020-ին, Զալիֆորնիոյ ժամով երեկոյեան ժամը 7:00-ին։

Մ. Իշխանի հայկական եութիւնը սահմանող բանաստեղծութեան երաժշտական տարազ տալով, վստահ ենք, որ յիշարժան բանաստեղծն ու այս նոր երգը հայ իրականութեան մէջ պիտի ապրին երկար։ Անգամ մը եւս հրապարակաւ շնորհակալութիւն կը յայտնենք բոլոր արուեստագետներուն, որոնք արձագանգեցին մեր հրաւերին եւ նուիրումով մասնակցեցան այս ծրագիրի իրականացման աշխատանքին։

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԿԵՐՈՆԱԿԱՆ ԿԱՐԶՈՒԹԻՒՆ

ԺՊԵՏՈՎ Դ ՌԻ ՅԻՇԱՏԱԿՈՎ Դ ՊԻՏԻ ԱՊՐԻՍ

(ՃԵՍԻՔԱՆ ՊԵՉՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

Պէյրութի Նաւահանգիստի պայթումէն անցած են 40 օրեր, բայց տակաւին այս ահաւոր ցնցումին ձգած վիշտն ու ցաւը տարբեր տարողութեամբ փորագրուած կը մնայ բոլորիս սրտերուն մէջ։

Պայթումին յաջորդող ժամերուն, երբ տակաւին աւերներու ստուգման մէջ էի, յանկարծ կարծես երկրորդ պայթում մըն էր երիտասարդ հիւանդապահուհի Ճեսիքա Պեզճեանի անունը լսել գոհերու անուանացանկին մէջ։

Ճեսիքան ճանչցած եմ Մետրոպեան վարժարանին մէջ պաշտօնավարած տարիներուս։ Առաջին պատկերը, զոր յիշեցի, անոր անմեղ ժպիտն էր, որ երբեք չէր բացակայեր Ճեսիքային դէմքէն՝ Նոյնիսկ ամենէն դժուար դպրոցական քննութիւններուն ժամանակ։ Իր դասընկերներուն միջեւ վէճերն անգամ իր ժպիտով լուծելու կարողութիւն ուներ ան։ Վստահ եմ՝ իր կեանքի դժուարութիւնները եւս պիտի յաղթահարեր այդ ժպիտով, բայց...

Մեր վերջին հանդիպումը դպրոցի վկայականաց բաշխման օրն էր՝ թաւի մը տարի առաջ։ Որոշած էր հիւանդապահութեան ճիւղը ուսանիլ. ապագայի ասպարեզ մը, որ շատ մեծ գոհողութիւններ կ'ենթադրէր, շատ բանի պատրաստ էր ինք, բայց չէր գիտեր ու երեսակայեր, որ այդ գոհողութիւնը գինք պիտի հասցներ մահուան։ Բայց այդպէս եղաւ, ցաւ ի սիրտ, պայթումի ահաւոր երկվայրկեանները բաւարար էին խլելու երիտասարդ կեանքը Ճեսիքային, գողնալու անոր բազում երբազները, հիւանդներուն ապաքինման համար տիւ ու գիշեր աշխատելու իր պատրաստակամութեան վերջ տալու, լուսաշող ժպիտը սառեցնելու...

40 օրեր անցած են, եւ ես տակաւին իր ընտանիքին ցաւակցութիւն չեմ յայտնած, իր նկարը Նոյնիսկ ընկերային ցանցերու վրայ չեմ գետեղած։ Անոր մահուան լուրը ստանալուս առաջին վայրկեանէն իսկ ինքզինքս ուզեցի համոզել, որ Ճեսիքան տակաւին ողջ է, պարզապէս մեր երկուքին կեանքի պայմանները պիտի ըլլային խոչընդոտը, որ մենք երբեք չհանդիպինք։

Կը հաւատամ, որ մահուան հետ միայն սիրտն է, որ աշխատանքէ կը դադրի, բայց այդ փոքր կտորի բա-



բախումէ դադրիլը երբեք արգելք չի կրնար ըլլալ յիշատակներու ոչնչացման։ Ճեսիքան Լիբանանի ամենէն փոքր հիւանդապահուհին էր, որ գոհ գնաց այդ պայթումին։ Այո՛, գոհ եւ ոչ Նահատակ։ Ճեսիքան երդուած էր փրկել ուրիշներու կեանքը, բայց ոչ գոհել ի՛ր կեանքը։

Դասընկերները, ծնողքը եւ բոլոր քեզ ճանչցողները քու ժպիտդ եւ անձնուէր ընտրութիւնդ այսօր եւս կը յիշեն եւ պիտի յիշեն։

Աստուած հոգիդ լուսաւորէ, պիտի ապրիս ժպիտիդ ընդմէջէն՝ բոլորիս յիշատակներուն մէջ։

Վ. ԱՆՏԱՌՈՐԵԱՆ

ՄԱՀԱԶԴ

Տիար Բաֆֆի Գատեան
Տէր եւ տիկին Կարօ եւ Անի Մուրաջանեան
եւ զաւակունք

Տիար Սարօ Գատեան
Տիար Համբարձում Ֆոտուկեան
Տէր եւ տիկին Արա Ֆոտուկեան եւ զաւակունք
Տիար Սերժ Գատեան
Տէր եւ տիկին Լուիֆֆի Մուրաջանեան
Ֆոտուկեան եւ Գատեան ընտանիքներ
Համալեւ եւ Հայաճամբիեան ընտանիքներ
Մուրաջանեան ընտանիք
եւ համայն ազգականներ կը գումեն իրենց կնոջ, մօր, զոջանչին, մեծ մօր եւ հարազատիս՝

ԱԶՆԻԻ ԳԱՏԵԱՆԻ

(Ճննալ՝ Ֆոտուկեան)

մահը, որ պատահեցաւ ուրբաթ, 18 սեպտեմբեր 2020-ին, յետ կարճատեւ հիւանդութեան։

Յուրաքանչեւ պաշտամունքը պիտի կատարուի կիրակի, 20 սեպտեմբեր 2020-ին, կէսօրէ ետք ժամը 3:00-ին, Հայ աւետարանական Ա. եկեղեցւոյ մէջ, Մշխիք պողոտայ, Զանթարի, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Թաիուիթայի Հայ աւետարանական գերեզմանատունը։

●*Ներկայս ընդունիլ իրեն մահազը։*
●*«Քորոնա» ծաիրին ստեղծած պայմաններուն բերմամբ ցաւակցութիւնները պիտի ընդունուին յետ թաղման արարողութեան եւ հեռաձայնով. Բաֆֆի՝ 03-259896, Անի՝ 03-912544 եւ Սարօ՝ 03-471901։*
●*Ծանօթ.՝ Փոխան ծաղկեպսակի՝ Նուիրատուութիւնները կատարել բարեսիրական հաստատութիւններու։*

ԱՆՆՈՐԱԳՐԱՐԶ

ՊԱՅՄԱՆԱԺԱՄԻ ԵՐԿԱՐԱԶԳՄԱՆ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆ ՌԻ ՊԱՐՈՒՆԱԿԱՇՎԱՆԳՆԵՐԸ

Պէյրութի մէջ մեծ աւեր գործած 4 օգոստոսի պայթումէն ետք, Ֆրանսայի Նախագահ Էմանուէլ Մաքրոն երկու առիթներով այցելեց Լիբանան եւ հանդիպումներ ունեցաւ լիբանանեան քաղաքական ուժերուն հետ։

Մաքրոն Լիբանան իր այցելութեան ընթացքին Նշեց. «Տըժէ Ֆրանսան իր դերակատարութիւնը չկատարէ, լիբանանեան ներքին հարցերուն պիտի միջամտեն իրանցիները, թուրքերն ու սեւուցիները, որոնք տնտեսական ու աշխարհաքաղաքական շահերը հաւանաբար ի վնաս լիբանանցիներուն ըլլան»։ Այն տպաւորութիւնը ստեղծելով, թէ ի տարբերութիւն Նշեալներուն՝ Ֆրանսական միջամտութիւնը պարզապէս Լիբանանի եւ լիբանանցի ժողովուրդին նկատմամբ սիրոյ արտայայտութիւն է, այլասիրութեան ու ոչ շահադիտական եւ եւ զուտ բարեգործական նպատակներու համար։ Իրողութեան մէջ անկիւն կապ ունի Ֆրանսա-Թուրքիա պարանաձգութեան հետ։

Իրադարձութիւնները՝ Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Ժան-Իվ Լը Տրիանի, Նախագահ Էմանուէլ Մաքրոնի եւ պաշտպանութեան նախարար Ֆլորանս Փարլիի Լիբանան իրերայաջորդ այցելութիւնները, պաշտօնական հանդիպումները, Մաքրոնի այցելութեան առիթով քաղաքական ուժերու ներկայացուցիչներու ֆրանսական դեսպանատան մէջ համախմբումն ու նոր կառավարութեան կազմութեան եւ քաղաքական նոր ուխտի մը ձեւաւորման հարցերով ֆրանսական Նախաձեռնութիւնները ցոյց կու տան, թէ լիբանանեան կացութեան կարգաւորումը իր Նախագահական ընտրութեան օրակարգով զբաղած ամերիկեան կողմի օրինութեամբ վստահւած է Լիբանանի «Գթաիրտ մօր»։

Լիբանանի մէջ Ֆրանսայի «առաքելութիւնը» մէկ ակներեւ երեւոյթն է արեւելեան Միջերկրականի շրջանին մէջ ֆրանսական աշխուժացման, որուն դրդապատճառը թրքական վտանգն է։ Պատահական չէր, որ երբ Թուրքիան 4 օգոստոսի պայթումէն անմիջապէս ետք առաջարկեց վերանորոգել Պէյրութի Նաւահանգիստը, Մաքրոն շտապեց Լիբանան այցելելով փակել Անգարայի ճամբան եւ այդպիսով շուրջ մատնեց իր այցելութենէն երկու օր ետք՝ 8 օգոստոսին Թուրքիոյ փոխնախագահ Ֆուաթ Օքթայի եւ արտաքին գործոց նախարար Մելուք Չաուշօղլուի Լիբանան այցելութիւնը։ 14 օգոստոսին ֆրանսական ծովածի ուղղաթիռակիր «Թոնէր» մարտականի՝ Պէյրութի Նաւահանգիստ հասնիլը այդ ուղղութեամբ ֆրանսական յստակ պատգամ մըն էր Անգարային, սակայն ոչ միայն անոր։ Մարտա-Նաւին ժամանումով շեփոքուող ֆրանսական պատգամը աւելի քան յստակ էր. «Բոլորդ ե՛տ կանգնեցէք, Ֆրանսան եւ լիբանանեան թղթածրարին տէրը»։ Բայց եւ այնպէս, խաղը տակաւին չէ աւարտած...

Մաքրոն «Ֆրանսական Նախաձեռնութեան» ծիրին մէջ լիբանանեան քաղաքական ուժերուն 15 օրուան պայմանաժամ ճշդած էր կառավարութիւն կազմելու։ Այդ պայմանաժամը, սակայն, չորեքշաբթի, 16 սեպտեմբերին ասարտեցաւ եւ երկարաձգուեցաւ 24 ժամով, ապա երրորդ անգամ ըլլալով երկարաձգուեցաւ, այս անգամ մինչեւ կիրակի, 20 սեպտեմբեր։ Երկարաձգումներ, որոնք կը վտանգեն Ֆրանսայի եւ անոր Նախագահին վարկը։ Իրողութիւն մը, որ առաւել քան յստակ կերպով ցոյց կու տայ, թէ ֆրանսական կողմը մեծ գրաւ դրած է իր Նախաձեռնութեան յաջողութեան վրայ եւ ամեն ջանք ու ճիգ կը թափէ եւ **ռիսքի** կը դիմէ փրկելու համար զայն՝ քաջ գիտակով, որ ատոր ձախողութեան գինը շատ սուղ է։ Ահա թէ ինչու, հակառակ այն իրողութեան, որ լիբանանեան թղթածրարը յանձնուած է Ֆրանսայի արտաքին հետախուզութեան գինը շատ սուղ է։ Ահա թէ ինչու, հակառակ այն իրողութեան, որ լիբանանեան թղթածրարը յանձնուած է Ֆրանսայի արտաքին հետախուզութեան ղեկավար, Լիբանանի մէջ Ֆրանսայի նախկին դեսպան Պեռնար Էմիլի, Մաքրոն ուղղակիօրէն ձեռնամուխ կը դառնայ «Ֆրանսական Նախաձեռնութեան» առաջին կէտին՝ կառավարութեան կազմութեան իրագործման առջեւ ծառացած խնդիրներու լուծման ջանքերուն։ Պէտք է Նշել, սակայն, որ երկարաձգումի քաղաքականութիւնը առաւել եւս կը բարձրացնէ ձախողութեան սուղ գինը, որմէ Ֆրանսական կողմը իրաւամբ կը գարիտուի։

Արդէն իսկ շրջանառութեան մէջ դրուած է տեղեկութիւն՝ կառավարութեան կազմութեան պայմանաժամի մինչեւ յառաջիկայ չորեքշաբթի օր երկարաձգման մասին։ Սակայն յստակ է, թէ այս երկարաձգման քաղաքականութիւնը չի կրնար անվերջ շարունակուիլ. Փարիզ կրնայ ի վերջոյ ստիպուիլ «անձեռոցը նետելու», ինչ որ մեծ աւետիս մը պիտի ըլլայ անոր անմիջական հակառակորդին՝ Թուրքիոյ համար, որ ախորժակը սրած կը սպասէ, բնականաբար Նաեւ հաւանաբար գաղտագողի կ'աշխատի «Ֆրանսական Նախաձեռնութիւն»-ը ձախողցնելու եւ ատոր տեղ առաջարկելու թրքականը կամ իր շահերուն նպաստաւոր մէկ այլ առաջարկի մը աշակցելու համար։

ԿԱՐԱՄ ԷՆՍԻԵԱՆ

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Վարանդ Փափագեանի մահուան առիթով Ս. Նշան մայր եկեղեցւոյ կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները.

Արա եւ Նորա Չըպաքեան 100.000 լ.ո.
Տիկին Սիվիկա Աճեմեան 150.000 լ.ո.

«ՍԱՐԱԺԻ ՀՐԱԺԱՐԵԼՈՒ ՄՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՒԱԼԻ Է»

Կ'ԸՍԷ ԷՐՏՈՂԱՆ



Թուրքիոյ Նախագահ Ռեճեփ Թայյիփ Էրտողան ցաւ յայտնեց Լիպիոյ Ազգային համաձայնութեան կառավարութեան վարչապետ Ֆայեզ Սարաժի՝ իր պաշտօնէն հրաժարելու մտադրութիւնը յայտարարելուն նկատմամբ: Այս մասին կը հաղորդէ «Անատոլու» լրատու գործակալութեան արաբերէն ծառայութիւնը:

Թուրքիոյ Նախագահը այդ մասին յայտարարած է ուրբաթ օրուան **Նամազէն** ետը՝ մեկնաբանելով Սարաժի՝ իր պաշտօնը յաջորդ գործադիր իշխանութեան յանձնելու մտադրութեան յայտարարութիւնը:

Էրտողան աւելցուց, որ Սարաժի հետ անցեալ շաբաթ հանդիպում ունեցած է Պոլսոյ մէջ՝ աւելցնելով. «Անշուշտ այսպիսի զարգացում մը եւ ատել (հանդիպումէն) ետք այս լուրը ստանալը մեզի համար ցաւալի էր»:

Էրտողան յիշեցուց, որ Թուրքիա Լիպիոյ մէջ միջամտած է եւ օրինական կառավարութեան աջակցած ընդդէմ գոր. Խալիֆա Յաֆթարի՝ աւելցնելով, որ «Երաշջական» Յաֆթարը օրէ օր շարունակ Նահանքի մէջ է՝ նշելով. «Յեղաշրջական Յաֆթարը ուշ կամ կանուխ պարտութեան պիտի մատուցի»:

Էրտողան յայտնեց, որ այս շաբաթ Թուրքիոյ եւ Լիպիոյ Ազգային համաձայնութեան կառավարութեան պատուիրակութիւններուն միջեւ հանդիպումներ տեղի պիտի ունենան՝ յոյս յայտնելով, որ այդ հանդիպումներուն ընթացքին կարելի կ'ըլլայ հարցերը յստակացնել:

ՉԻՆԱՍՏԱՆ ՌԱԶՄԱՓՈՐՉԵՐ ԿԸ ԿԱՏԱՐԷ ԹԱՅՈՒՄՆԻ ՆԵՂՈՒՑԻՆ ՄՕՏ

Չինաստան ռազմափորձեր կը կատարէ Թայուանի Նեղուցին մօտ: Այս մասին կը հաղորդէ «Ռոյթըրզ» լրատու գործակալութիւնը՝ յղում կատարելով Չինաստանի պաշտպանութեան Նախարարութեան բանքեր ժէն Կոնցիանին:

Կոնցիան նշած է. «Ասոնք ողջամիտ եւ անհրաժեշտ գործողութիւններ են՝ ուղղուած Թայուանի Նեղուցին մէջ ընթացիկ իրավիճակին եւ ազգային գերիշխանութեան ու տարածքային ամբողջականութեան պաշտպանութեան»:

Ըստ Չինաստանի պաշտպանութեան Նախարարութեան բանքերին, Թայուան Չինաստանի ներքին գործն է, որ չի հանդուրժեր օտարերկրեայ միջամտութիւն:

«Չինաստանի վրայ վերահսկողութեան համար Թայուանը օգտագործելու փորձերը կամ ինքնակատարելագործման նպատակով օտարերկրացիներու վրայ յենիլը ցանկալին իրականութեան փոխարէն ներկայացնել է: Անոնք, որոնք կրակի հետ կը խաղան, պիտի այրին», շեշտած է ան:

Նշենք, որ Չինաստանի յայտարարութիւնը կատարուած է Միացեալ Նահանգներու տնտեսութեան փոխնախարար Քիւշ Զրաչի Թայուան այցելութեան օրը: Ան պետք է հանդիպի երկրի Նախագահ Ցայ Ին-Վենի հետ, իսկ շաբաթ օր ներկայ պիտի գտնուի հանգուցեալ Նախագահ Լի Ռեն-Յուէյի յիշատակի արարողութեան:

ՆԱԽԱԳԱՀ ԱՌԻՆ ԽՕՍՔԸ ...

Շարունակուած Ա. Էջէն

Հանրապետութեան Նախագահը շնորհակալութիւն յայտնեց Լիբանանին օժանդակութիւն ցուցաբերած բոլոր երկիրներուն՝ շեշտելով, որ օժանդակութիւնները պէտք է հասնին կարիք ունեցողներուն, պէտք է Նաեւ Նախքան ձմեռնամուտ վերանորոգել մօտաւորապէս 200 բնակարանային միաւորները, որոնք վնասուած են կամ ամբողջովին քանդուած, ինչ որ պատճառ դարձած է 300.000 քաղաքացիներու անտուն մնալուն: Նախագահ Աուն աւելցուց, որ պէտք է վերակառուցել Պէյրութի Նաւահանգիստը՝ Լիբանանի տնտեսութեան կենսական զարկերակը, եւ յաղթահարել բոլոր մարգերուն՝ առողջապահութեան, իրթութեան, սննդեղէնի, շինարարութեան, գրօսաշրջութեան կրած ծանր վնասները:

Նախագահ Աուն յայտնեց, որ Լիբանան այսօր աւելի մեծ աջակցութեան կարիք ունի միջազգային ընտանիքէն եւ ՄԱԿ-էն, որպէսզի յաջողի շրջանցել այս արտակարգ կացութիւնը՝ ուղղորդուած աշխատանքներու եւ պետական մարմիններու հետ սերտ համագործակցութեան միջոցով, ծրագրաւորելով մարդասիրական օգնութիւնը՝ տնտեսական եւ ընկերային կայունութիւնը ապահովելու համար, եւ ցանկալով հասնիլ կայուն զարգացման՝ լուծելու ներկայ խնդիրները եւ պատրաստուելու ապագայ պահանջներուն:

«ՌՈՒՍԻԱՆ ՊԱՏՐԱՍ Է ԱՇԽԱՏԵԼՈՒ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՐԳՆԵՐՈՒ ՌԵՒԷ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ»

Կ'ԸՍԷ ԼԱՊՐՈԿ



Ռուսիոյ արտաքին գործոց Նախարար Սերկէյ Լաւրով, խօսելով Միացեալ Նահանգներու մէջ 3 խոյնհեղուկի Նախատեսւած Նախագահական ընտրութեան մասին, նշած է, որ Մոսկուան պատրաստ է աշխատելու Միացեալ Նահանգներու որդեկ կառավարութեան հետ: Այս մասին Լաւրով յայտնած է «ՌԻԱ Նովոսթի» լրատու գործակալութեան հետ հարցազրոյցի ընթացքին:

«Մենք, ի հարկէ, պիտի աշխատիք որդեկ երկրի մէջ ընտրուած որդեկ կառավարութեան հետ, եւ ատիկա կը վերաբերի Նաեւ Միացեալ Նահանգներուն: Սակայն Միացեալ Նահանգները հետաքրքրող բոլոր հարցերուն շուրջ մենք պիտի խօսինք՝ բացառապէս հիմնուելով հաւասարութեան, փոխադարձ շահաւետութեան եւ շահերու հաւասարակշռութեան որոնման վրայ: Մեզի հետ վերջնագիրներով խօսիլը անիմաստ է, անօգուտ է: Եթէ ոեւէ մէկը ատիկա տակաւին չէ հասկցած, ապա ան անարժէք քաղաքական գործիչ է», նշած է Լաւրով:

Ռուսիոյ արտաքին գործոց Նախարարին համաձայն, շուտով պիտի սկսին Միացեալ Նահանգներու Նախագահի թեկնածուներու բանավեճերը, որոնց մէջ արդէն իսկ գլխաւոր կէտերն են կէ Դուսիոյ՝ «Միացեալ Նահանգներու ընտրութեան միջամտելու հարցը»:

Ռուսիոյ արտաքին գործոց Նախարարը, Նաեւ մեկնաբանելով Ուքրանիոյ տագնապի խաղաղ լուծման հեռակարները, նշած է. «Չեմ կարծեր, որ Ուքրանիոյ մէջ ներկայ կառավարութեան, ինչպէս Նաեւ Նախորդ Նախագահին օրով Միւսքի համաձայնագիրներու կատարման հարցին մէջ յառաջընթաց ըլլայ, թեկուզ միայն այն պատճառով, որ այդ մասին հրապարակաւ կը խօսին Նախագահ Չելսնս-

քին, փոխվարչապետ Ռեգ-նիքովը, որ պատասխանատու է Ուքրանիոյ մէջ իրավիճակի լուծման համար կապի խումբին մէջ տարուող աշխատանքներուն համար, կը խօսի Նաեւ արտաքին գործոց Նախարար Քուլեպան»:

Ան Նաեւ յիշեցուցած է, որ Ուքրանիոյ իշխանութիւններուն ներկայացուցիչները կը յայտարարեն, որ Միւսքի համաձայնագիրները չեն կրնար չեղեալ յայտարարել, որովհետեւ անոնք (ինչպէս Նաեւ Ռուսիոյ հանդէպ զանոնք չկատարելու համար մեղադրանքները), կը հանդիսանան Եւրոպական Միութեան եւ Միացեալ Նահանգներու հակառակակող պատժամիջոցները շարունակելու քաղաքականութեան հիմքը:

«Այդուհանդերձ, Միւսքի համաձայնագիրներու Եւրթեան այդպիսի այլաւերած ըմբռնումը, կամ աւելի ճիշդ՝ Ռուսիան ամէն ինչի մէջ մեղադրելու փորձը, հակառակ անոր որ Ռուսիան այնտեղ ոչ մէկ տեղ կը յիշատակուի, խոր կերպով ներառփանցած է մեր Եւրոպացի գործընկերներուն, որոնց շարքին Ֆրանսայի եւ Գերմանիոյ գիտակցութեան մէջ, որոնք, ըլլալով Միւսքի համաձայնագիրներու համահեղինակներ, չեն կրնար չհասկնալ, որ ուքրանացիները պարզապէս կը խեղաթիւրեն իրենց պարտականութիւնները՝ փորձելով հեռանալ անոնցմէ եւ Միւսքի համաձայնագիրներուն այլ բնոյթ պարտադրել», նշած է Ռուսիոյ արտաքին գործոց Նախարարը:

Ռուսական դիւանագիտութեան պետը աւելցուցած է, որ Քիւեի առաջարկած հաւասարակշռութիւնը՝ առաջնահերթ սահմանի վերահսկողութիւն, այլ ոչ թէ համաներում, ընտրութիւններ եւ սահմանադրութեան մէջ ամրագրուած կարգավիճակ, լիովին կը հակասեն Միւսքի համաձայնագիրներուն մէջ հաստատուած յաջորդականութեան:

ԱՄՍՐԻԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶԵՐԲԱԿԱԼԷ ՍՈՒՐԻԱՅԷՆ, ԻՐԱԲԷՆ ԵՒ ԹՈՒՐԲԻԱՅԷՆ 38 ԱՊՐԻՆԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ ՓՈԽԱԴՐՈՂ ԲԵՌՆԱԿԱՌՔԻ ՎԱՐՈՐԴԸ

Աւստրիական ոստիկանութիւնը յայտարարեց, որ ձերբակալած է վարորդը սառնարան-բեռնակառքի մը, որուն մէջ կը գտնուէին 38 ապօրինի սուրիացի, իրաքցի եւ թուրք գաղթականներ, ներառեալ՝ 6 երեխաներ, որոնք իրարու վրայ դիզուած էին առանց օդ շնչելու բացաւածքի:

Ոստիկանութիւնը նշեց, որ բեռնակառքը յայտնաբերած է մայրուղիի մը եզրին:

«Գաղթականները յայտնեցին, որ մահէն կը վախՆային ճամբորդութեան ընթացքին՝ թրուածիկի նուազումի պատճառով, եւ կրցած են բեռնակառքը կանգնեցնել», նշեց ավստրիական ոստիկանութիւնը՝ աւելցնելով, որ երբ բեռնակառքը կանգ առած է, կարգ մը գաղթականներ առիթը օգտագործած են փախուստ տալու: Փա-



խուստ տուած է Նաեւ բեռնակառքի վարորդը՝ 51 տարեկան թուրք մը, որ Ռումանիա կը բնակի:

Ոստիկանութիւնը յայտնեց, որ բեռնակառքին մասին տեղեկութիւն ստացած է, ուստի անմիջապէս ուղղաթիւ մը ուղարկած է եւ յաջողած ձերբակալել վարորդը, որ իշխանութիւններուն կարծիքով՝ կ'աշխատի մարդից՝ մաքսանենգման ցանցի մը մէջ:

«Գաղթականները բեռնակառք բարձրացան Ռումանիոյ մէջ վճարելէ ետք 6-էն 8 հազար եւրօ: Այդ գումարը անոնցմէ իւրաքանչիւրը վճարեց Ռումանիան Յունգարիայէն բաժնող Եւրոպական Միութեան արտաքին սահմանը անցնելու եւ Աւստրիոյ ճամբով Արեւմտեան Եւրոպա հասնելու համար», հաղորդեց ավստրիական ոստիկանութիւնը:

ԿԻՊՐՈՍԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՒՐՈՊԱԿԱՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

«Թուրքիոյ նկատմամբ երկակի չափանիշներ պէտք չէ կիրարկուի: Եւրոպական Միութեան անդամ երկիրներու գերիշխանութիւնը պէտք է դառնայ կանոն, որ ոչ ոք կրնայ անտեսել, իսկ Միութեան արծաթանգը պէտք է ըլլայ կտորիկ», յայտարարած է Կիպրոսի Նախագահը՝ կոչ ուղղելով խիստ պատժամիջոցներ հաստատելու Թուրքիոյ դէմ:

Անսաթասիատիս Նաեւ նշած է, որ Կիպրոսը Թուրքիոյ հետ յառաջիկայ շաբաթ տեղի ունենալիք հանդիպումին ժամանակ պատրաստ է երկխօսութեան եւ ընդգծած է մինչեւ հանդիպումը հարցին շուրջ Եւրոպական

Միութեան միասնական դիրքորոշման կարեւորութիւնը:

Նշենք, որ Եւրոպական խորհրդաւանը դատապարտած է Յունաստանի եւ Կիպրոսի բացառիկ տնտեսական գոտիին մէջ Թուրքիոյ գործողութիւնները եւ սպառնացած պատժամիջոցներ կիրարկել Անգարայի դէմ:

Եւրոպական խորհրդարանը Եւրոպական խորհուրդին կոչ ուղղած է պատրաստ ըլլալու մշակելու հետագայ սահմանափակումները, որոնք պէտք է ըլլան ոլորտային ու նպատակային եւ պէտք չէ բացասաբար անդրադառնան Թուրքիոյ ժողովուրդին կամ այնտեղ ապրող գաղթականներուն վրայ:

ԻՆՏՈՆԵԶԻՈՅ ՄԷՋ ԴԻՄԱԿ ԶԳԻՈՂ ԱՆՁԵՐԸ ԻԲՐԵՒ ՊԱՏԻԺ ԿԸ ՂՐԿԵՆ «ՔՈՐՈՆԱ»-ԷՆ ՄԱՀՅԱԾՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՍԵՐ ՓՈՐԵԼՈՒ



Ինտոնեզիոյ Արեւելեան Ճաւա Նահանգի Կրեւիք շրջանին մէջ որոշած են «Քորոնա» ժահրի համաճարակին ընթացքին առանց դիմակի շրջող անձերը պատժել՝ զանոնք ուղարկելով ժահրին պատճառով մահացածներու համար գերեզմանափոսեր փորելու: Այս մասին կը հաղորդէ «Տէյի Մէյլ» օրաթերթը:

Բրիտանական օրաթերթը կը մանրամասնէ, թէ գերեզմանափոս փորելու ուղարկուած են առաջին ութ իրաւախախտները:

Տեղական իշխանութիւններու ներկայացուցիչները լրագրողներուն յայտնած են, որ շրջանին մէջ գերեզման փորող միայն երեք մասնագէտ մնացած է, այնպէս որ կողմնակի «օգնութիւնը անոնց չէր խանգարեր»:

Ինտոնեզիական Կրեւիք շրջանին մէջ «Քորոնա» ժահրով վարակուածներուն թիւը կը շարունակէ աւելնալ, տեղւոյն գիւղերուն մէջ կը խստացնեն մեկուսացումի դրուական սահմանափակումները:

Ինտոնեզիոյ մէջ համաճարակի սկիզբէն ի վեր «Քորոնա» ժահրով վարակուածներուն թիւը հասած է 218.382-ի, որոնցմէ 54.220-ը տակաւին չէ ապաքինած, սակայն փորձագէտներու համաձայն՝ անոնց իսկական թիւը շատ աւելի բարձր է:

«ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ ...»

Շարունակուած Ա. Էջէն

Թուրքիոյ արտաքին գործոց Նախարարութեան բանքերը հաղորդագրութիւն մը հրապարակելով յայտնեց. «Բոլորը գիտեն, թէ 2017-ի բանակցութիւններու ձախողութեան պատճառը յունական կողմին կղզիի թրջական կողմին հետ հաւասարութիւնը չընդունիլն է»:

«Բանակցութիւններու աւելի քան յիսուն տարուան ամբողջ ընթացքին քննարկուեցան դաշնակցային լուծումի բոլոր մանրամասնութիւնները, ատելէ ետք մեզի ոչինչ մնաց դաշնակցային դրութեան մասին խօսելու համար: Զաղաքական հաւասարութիւնը ընդունելու բոլոր ենթադրեալ տարրերը եւս անորոշ են», ըսաւ ան:

«Յունական Կիպրոսի ղեկավարութիւնը «Զարանս Մոնթանա»-ի բանակցութիւններէն ի վեր բնական հարստութիւններու բաժնեկցութեան համար նուազագոյն դրական քայլը չառաւ», յայտնեց Աքսոյ:

365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԷ՝ ՔԱՀԼ-Ի ՀԱՅ ՏԱՐԵՑՆԵՐՈՒՆ ՏԱՆ

Բեշիշեան ընտանիք վեհամայր Լուսին Բեշիշեանի մահուան առաջին տարեդիցին առիթով կը ստանձնէ օրուան մը ճաշի ծախսը՝ 750.000 լիբանանեան ոսկիով:

365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԷ՝ ՔԱՀԼ-Ի ՀԱՅ ՏԱՐԵՑՆԵՐՈՒՆ ՏԱՆ

Տեր եւ տիկին Բաֆֆի եւ Սեւան Պաղճեաններ իրենց ծնողներուն՝ Միսա եւ Սրբուհի Մարթայեաններու յիշատակին կը ստանձնեն օրուան մը ճաշի ծախսը՝ 1.000.000 լիբանանեան ոսկիով: (20 սեպտեմբեր 2020)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՎՐԵԺ ՄԱՏԹԵՆՍԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի կիրակի, 20 սեպտեմբեր 2020-ին, Նորաշէնի Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՇԱՆՔ ՅԱԿՈԲԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի կիրակի, 20 սեպտեմբեր 2020-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի: